

1880թ. Ռամազոլիօն նշանակուեց աւագ քարտուղար արտակար կարեր կարեր գործերի միաբանութեան, 1882թ. եղաւ արքեպիսու կուրու և Մագրիցումն նույիրակ պապի, իսկ 1887-ին էլ կարդինալ:

Ռամազոլիան Լևոն XIII պապի մօտ կարդինալ եղած ժամանակ միշտ պնդում էր, որ Վատիկանը պէտք է ընդունէ հասարակապետութիւնը Ֆրանսիայում և յարմարեցնել իւր գործունէութիւնը Ֆրանսիայում այդ երկրի նոր բնեմին Դորանով Ռամազոլիան Ֆրանսիայում ձեռք բերեց մեծ ժողովրդականութիւնը երբ Պիոս X պապի անհաչու քաղաքականութիւնը առաջ ընթաւ բաժանումն Ֆրանսիայի և Վատիկանի մէջ, Ռամազոլիան մեղադրում էր պապին և նորա մերձաւոր խորհրդական Մերրի-դել-Վալին և առում էր, եթէ իշխանութեան մօտ ինքն լինէր, այդ գէպըում Ֆրանսիայից բաժանումն չէր լինիլ:

Ռամազոլիան միշտ յայտնի էր իրեկ եռապետական դաշնակցութեան հակառակորդ և կողմնակից էր բարեկամական մերձեցման մուսաստանի և Ֆրանսիայի հետ Լևոն XIII պապի մահից յետոյ Ռամազոլիան համարեւում էր ամենահաւաքանական թեկնածուն պապական աթոռի, բայց երբ պապի ընտրութեան ժողովում կարդինալներից մէկը Ֆրանց Յովակի կայսեր կողմից Ռամազոլիայի ընտրութեան ընդդէմ բողոքով դուրս եկաւ, նորա ընտրութեան խնդիրը ջուրն ընկաւ:

Վերջին ժամանակներում Պիոս X-ի հիւանդութեան պատճառով մամուլի մէջ մի քանի թեկնածու կարդինալների անուններ էին տալիս, որոնք ունեին ամենահաւաքանական շանսերը պապական աթոռին արժանանալու համար, այդ ամենահաւաքանական թեկնածուներից մէկն էլ համարեւում էր Ռամազոլիան, թէև միաժամանակ հարց էր առաջ գալիս, թէ արդեօք այս անդամ ևս Ֆրանց Յովակի կը դնի իւր մերժումն (veto):

Պիոս X-ի ընտրութիւնից յետոյ Ռամազոլիան՝ անակնկալի հանդիպելով Ֆրանց Յովակի կայսեր կողմից և զգալով իւր առանձնացած զրութիւնը Վատիկանում առաջականում, հեռացաւ գործերից:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՐ

Աւետարանական-Լուտերական բնդիանուր համագումարը, Անցեալ տարուայ 8—11 սկզբնեմբերի Նիւրնբերգ քաղաքում եղել է աւետարանական-լուտերական ԽV համագումարը, կազմուած Եւրապայի և Ամերիկայի զանազան ներկայացուցիչներից։ Համագումարի գլխաւոր նպատակն է եղել՝ որ արծարծեն այս միտքը՝ թէ պէտք է

հաւատարիմ մեալ գուտերականութեան հին աւանդներին։ Համագումարում յայտնի ճառափօսներ խօսել են դանազան հարցերի մասին։ Բարոն Պետրան խօսել է «Անհրաժեշտ է աշխարհականներին աւելի շատ ծառայութիւն և կեղեցում», բնարանի վրայ, ապացուցանելով՝ որ աշխարհականներն ոչ պակաս հոգևորականներից կոչուած են ծառայելու և կեղեցուն Միւս ճառափօսներն առաջարկում են քաղաքներում բարեկաւել և կեղեցական համայնքի կակմակիրապութիւնը, և բարձրագոյն դպրոցներում փոփոխել կրօնի դասաւութեան ձեր։ Համագումարը Լուտերի յիշատակին կազմել է ժողովրդական երեկոյթ, և ստացուած արդիւնքը յատկացրել են առանձին ֆօնդի յանուն կուտերի, ի նկատի առնելով՝ որ մօտենում է գերմանական բժիրումացիայի 400 ամեակը (1917 թ.), և այդ ֆոնդն էլ կոչել են «Lutherdaik»։

Անգլիական եկեղեցի

Անգլիական համագումարը Սաութհեմփտոնում, Առվորական անգլիական համագումարը անցեալ 1913 թ. կայացաւ Սաութհեմփտոնում սեպտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի 3-ը։ Մասնակցողների թիւն էր 2470 հոգի։ Համագումարի առաջին օրն անգլիական երեք և կեղեցիներում քարոզ են խօսել, ա) Քէնտրոնի արքեպիսկոպոսը, բ) Լոնդոնի, և գ) Ճարտուսի և պիտուանի իշխանութեամբ։ Քէնտրոնի արքեպիտուանը խօսել է հետեւեալ բնարանն ունենալով, «Եւ լսիցիմ զձէնջ, զի հաստատուն կայցէք ի մի հոգի և միով չնչով նահատակիցիք ի հաւատու ուեստարանին», Փիլիպ. Ա—27, Քարոզի միաբն այն էր՝ որ առաջարարակ քրիստոնեաներն իրենց աշխարհային աշխատանքներն սլէաք է կատարեն այն գիտակցութեամբ, որ դորանով նորա ծառայում նու քրիստոնէական հաստակութեան և միաժամանակ կատարում են և կեղեցական աշխատանքը, եթէ այժմ շատերը չունեն այդ գիտակցութիւնը, գորանում յանցաւոր է հոգևորականութիւնը, որ նրանց սովորեցնում է նայել և կեղեցական աշխատանքի վրայ՝ իրեն մի բոլորովին կողմանի բան։

Լոնդոնի և պիտուանուն թէն առնասարակ գործնական մարդ է, այս անդամ Ծնտերել էր դաւանաբանական ինչդիր — կոչումն սրբոց, պրիմինը նորան առիթ է տուել վեր կատարած ճանապարհորդութիւնը Առուսաստանում, երբ նա ոռուաց հոգևորականների հետ զրուցելիս, նկատել է վերջիններիս զարմանքը անգլիական և կեղեցուն նկատմամբ ամենից շատ այն մասին, որ անգլիական և կեղեցում ոչ մի կատ չկայ կենդանի մարդկանց և երկրային ասպարէզը

թողած ու սրբերի կարգը դասուած մարդկանց մէջ Այս մասին խօսելիս առաջ բերաւ անդիմական եկեղեցու վերոյիշեալ հայեացքին կողմնակիցների և հակառակորդների մտքերը, յայտնեց՝ որ ամենալուրջ գժուարութիւններն են հանդէս զալիս որ ու է ձևով ընդունելու սրբոց կոչման (պրি�զվանի) հայեացքը, ինչ որ սուս հոգևորականութիւնն է ընդունում:

Համագումարի նախագահը՝ Թալրօս եպիսկոպոսը՝ բաց անելով ժողովը իւր ճափի մէջ խօսեց Աստուծոյ արքայութեան մասին։ Համագումարի ամբողջ ծրադրի հիմքը կազմնէ Ե.Աստուծոյ թագաւորութեան գաղափարը։ Այդ թագաւորութեան կենդրոնում կանգնած է Խնքը Թագաւորը—Քրիստոս, ուստի և ծրադրում առաջին տեղը զրուած է եղել բնաբան։ «Քրիստոսի կոչումն» և սորա համեմատ այլ բնաբանները կարդացուել են նաև զանազան զեկուցումներ։ Եկեղեցական օրէնքը ամուսնութեան նկատմամբ, Աստուծոյ արքայութեան գաղափարը կապուած երկնային կեանքի այլ և այլ բարեկառութեանների հետ, սեռի և ամուսնութեան մասին և այլն։ Այս վերջին ինդիքների բանախօսութեանց առթիւ վէճերին մասնակցել են նաև կանայք։ Առաջարարակ անզինացի կանանց մէջ շատ պատրաստուած ոյժեր կան, որոնք նշանաւոր ժողովներին և կարեռ խնդիրների վիճաբանութեանց մասնակցում են և փայլում իրենց մտաւոր պատրաստութեամբ։ Դժբախտաբար դեռ մեզանում շարունակում են իրենց արտաքինի արդ ու զարդով զբաղուիլ ու նուիրել իրենց մամանակը խնջոյքների։

P. d. U.